## 71-ՐԴ ՆԻՍՏ

**21 փետրվարի 1919թ.**

Նիստը բացվում է երեկոյան ժ. 8-ին, նախագահությամբ *Տեր-Խաչատրյանի.* մինիստրական օթյակում են ներքին գործոց, արտաքին գործոց և լուսավորության մինիստրները:

*Հ. Բուդաղյան* - Զեկուցում է Երևան քաղաքը, Երևանի, Էջմիածնի, Սուրմալվի, Դարալագյազի գավառները մի զինվորական շրջանի վերածելու և եղած զինվորական դրությունը վերացնելու օրինագծի մասին:

Քվեարկությամբ ընդունվում է օրինագիծը քննել շտապողաբար: Տաք վիճաբանություն է առաջանում օրինագծի ընդհանուր հիմունքների վերաբերմամբ: Դաշնակցական, ժող[ովրդական] կուս[ակցության] ֆրակցիաները և ներքին գործոց մինիստրը պաշտպանում են օրինագիծը: Սոքա պատճառաբանում են, որ երկրում գոյություն ունեցող անկարգությունները, անիշխանությունը միայն այդ ձևով կարելի կլինի վերացնել. դրանից դուրս եղած միջոցներով ներկա պայմաններում կարելի չէ հաստատուն իրավակարգ ստեղծել:

Դեմ են օրինագծին սոց[ցիալ]-դեմ[ոկրատիական], սոց[ալիստ] հեղափ[ոխականների] և մուսուլմանական ֆրակցիաները՝ պատճառաբանելով, որ այդ առաջարկված միջոցը կարող է չարիք դառնալ ժողովրդի համար: Սոց[ցիալ]-դեմ[ոկրատիական] ֆրակցիայի ներկայացուցիչ *Հ. Ազատյան* կասկած է հայտնում այն մասին, որ միգուցե հետին նպատակներով է առաջարկվում օրինագիծը:

Հայտարարվում է 15 րոպե ընդմիջում:

Նիստը վերաբացվում է, սակայն քվորում չլինելու պատճառով նախագահը հայտարարում է փակված գիշերվա ժ. 11-ին:

**«Զանգ», 7 մարտի 1919թ.**